ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՑԱՆՑԱՅԻՆ, ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ և ՆԵՐՔԻՆ ՑԱՆՑԻ և ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԿԱՅՔԻ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱԹԵԹՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2018/1

ք. Երևան «28» Դեկտեմբերի 2017թ.

ՀՀ առողջապահության նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ն.Զուլոյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մայ Քլաբ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Դ.Սարգսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ***Ցանցային, համացանցային և ներքին ծառայողական կայքի համակարգչային ծրագրային փաթեթների սպասարկման ծառայությունների*** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **14,596,900 (Տասնչորս միլիոն հինգ հարյուր իննսունվեց հազար ինը հարյուր) ՀՀ դրամ**:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

---

[1] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **4** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ Առողջապահության նախարարություն.	«Մայ Քլաբ» ՍՊԸ
Երևան, Կառավարության 3 շենք	Ք.Աշտարակ, Գիտական 2 , բն 3 ՀՎՀՀ
ՀՎՀՀ 02507171	«Ամերիաբանկ» ՓԲԸ
	Հ/Հ 1570004723220100
	ՀՎՀՀ 02593047
Կ.Տ.	Կ.Տ.
(ստորագրություն)	(ստորագրություն)
Աշխատակազմի ղեկավարի ժ/պ՝ Ն.Զուլոյան	Տնօրեն՝ Դ.Սարգսյան

Հավելված N 1
«28» Դեկտեմբերի 2017թ. կնքված
ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2018/1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության								
							մատուցման	
Հ/Հ	**Անվանում**	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	**Տեխնիկական բնութագիր**	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը**
1.	**Ցանցային, համացանցային և ներքին ծառայողական կայքի (ինտրանետի) համակարգչային ծրագրային փաթեթների սպասարկման ծառայություններ**	72211124	ՀՀ առողջապահության նախարարության, շենքերում տեղեկատվական հանգույցների, ծրագրային շահագործման և տեղադրման ապահովման, ինչպես նաև առողջապահական տվյալների փոխանակման ծառայությունների նկարագրերը, այդ թվում՝ տեղադրված 10 սերվերների և առավելագույնը 140 աշխատանքային համակարգիչների համար՝ 1. Լիցենզավորված հակավիրուսային սերվերի շուրջօրյա սպասարկում առավելագույնը 140 համակարգիչների համար: 2. DHCP և DNS սերվերների, ինչպես նաև AD սերվերի 24-ժամյա անխափան աշխատանքի ապահովում և սպասարկում: 3. Brandmauer և Proxy սերվերների 24-ժամյա անխափան աշխատանքի ապահովում և սպասարկում: 4. Տեղեկատվական կենտրոնի սերվերների աշխատանքային կայանների հակավիրուսային պաշտպանության անխափան աշխատանքի ապահովում: 5. Թիրախային սերվերային խմբի համար առանձնացված (DMZ) միջավայրի ստեղծում և շուրջօրյա սպասարկում: 6. Քաղաքացիական ծառայության բազային տվյալների 24-ժամյա սերվերի սպասարկում: 7. Լիցենզիաների տրամադրման և արխիվացման սերվերի ամենօրյա սպասարկում, տվյալների արխիվացում, անխափան աշխատանքի ապահովում: 8. Mail սերվերի ամենօրյա սպասարկում, տվյալների արխիվացում, 24 ժամյա անխափան աշխատանքի ապահովում: 9. 8 ip տեսախցիկների և 68 տպիչ սարքերի ծրագրային սպասարկում:	դրամ	14,596,900	1	Ք.Երևան, Կառավարական տուն N 3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու պահից մինչև 15.12.2018թ

			10. Mulberry համակարգի 2 սերվերների սպասարկում (առանձին ներքին կապուղիով միացում համակարգին և անխափան 24 ժամյա կապի ապահովում ներքին և արտաքին օգտվողների համար մշտական հասանելիություն միջանցիկ սարգավորումներով՝ փոխարկիչներով, միկրոտիկով): 11. Mulberry համակարգի խորն իմացությամբ ամենօրյա խորհրդատվություն առավելագույնը 140 օգտագործողների համար: 12. Առավելագույնը 140 համակարգիչների մշտական դիագնոստիկա: 13. Ընդհանուր համակարգի անխափան և անվտանգ աշխատանքի ապահովում: 14. Օպերացիոն համակարգերի կարգավորում ըստ պահանջի կամ անհրաժեշտության: 15. Աշխատանքային ծրագրերի (Word, Outlook , Excel, Power Point, Photoshop, Corel Draw, Fine Reader, 1C, ՀԾ և այլն) խորը գիտելիքների իմացությամբ ամենօրյա խորհրդատվություն ըստ պահանջի կամ անհրաժեշտության: 16. ՀՀ ԱՆ պաշտոնական կայքէջի վարում, ՀՀ ԱՆ սոցիալական էջերի վարում (Facebook, Twitter): 16.1. Տեխնիկական աջակցություն սպասարկում՝անխափան աշխատանքի հսկում 24/7, կայքի պարբերաբար արխիվացում, անհրաժեշտության դեպքում վերականգնում, կայքի այցելությունների հսկում, կայքի աուդիտ և տեխնիկական խորհրդատվություն: 16.2. Կայքի սպասարկում պարունակության և առաջխաղացման՝ տրամադրված տեքստի խմբագրում և ձևավորում համաձայն կայքի դիզայնի/կառուցվածքի, մաքուր կոդի մշակում (գրված կոդը հասկանալու և փոփոխելու ունակություն), անհրաժեշտության դեպքում նկարների խմբագրում և տեսանյութերի պատրաստում՝ համապատասխան ֆորմատի: 16.3. Կայքի ինտեգրում սոց. ցանցերի հետ (Facebook, Twitter)՝ SEO տեքստերի խմբագրում համապատասխան ձևաչափով՝ այցելուների հոսքը խթանելու նպատակով: 16.4. "e draft.am" իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքի առողջապահության նախարարության մասով սպասարկում/հսկում: HTML, CSS հիպերտեքստային և, Js ծրագրերի հիմնական գիտելիքների ապահովում: ՀՀ ԱՆ պաշտոնական կայքէջի կառավարման ծրագրի (admin panel) ադմինի մուտքի իրավունքի կառավարում: Կայքում տեղադրվում է միայն այն ինֆորմացիան, որը տրամադրվում է կայքի պատասխանատու ծառայության կողմից և նրա պատասխանատվությամբ: 17. Գործող ներքին համակարգչային ցանցի անխափան և անվտանգ աշխատանքի ապահովում, ընդլայնում ըստ պահանջի: 18. ԱՆ ում գտնվող բոլոր սերվերների և համակարգիչների ծրագրային ապահովան, վերատեղադրում, վերահսկում (proxy					

			server, mail server, active directory, ftp և այլ սերվիսների սպասարկում, ըստ ժամանակացույցի արխիվացում), ինչպես նաև, ցանցում առկա բոլոր սարքերի ծրագրային անխափան և անվտանգ աշխատանքի ապահովում: 19. ԱՆ տեղեկատվական կենտրոնի (Data Center) և ներքին կորպորատիվ ցանցի (Intranet) սպասարկում: Տեղեկատվական կենտրոնի ներքին և արտաքին՝ օգտագործվող VPN ցանցի անխափան և անվտանգ աշխատանքի ապահովումը, ինչպես նաև կարգավորվող սվիչների, OKTELL թվային հեռախոսային համակարգի MY PBX ավտոմատ հեռախոսային համակարգի իմացություն և սպասարկում, տվյալների և օգտվողների փոփոխություն: 20. Հայկական լրատվական առնվազն հարյուր կայքերում առնվազն 22 բանալի բառերի միջոցով ավտոմատացված մեդիա մոնիթորինգային ծառայության տրամադրում և սպասարկում: 21. Ցանցային ադմինիստրատորի, սիստեմային ադմինիստրատորի, ՎԵԲ ադմինիստրատորի, համակարգչային ծրագրերի խորհրդատուի-Help Desk, Mulberry համակարգի մասնագետ-խորհրդատուի, տեխնիկական սպասարկման ծառայությունների (առնվազն 4 հոգի), ապահովում: Համապատասխան մասնագետների ամենօրյա (9:00-18:00) առկայությունը վերոհիշյալ կազմակերպությունում անհրաժեշտ է, արտաժամայինը ըստ պահանջի: Ինչպես նաև մասնագետի աջակցություն նախարարության ներկայացումը ցանկանած ներքին և արտագնա միջոցառումներում և աշխատանքներում: 22. Նշված մասնագետները պետք է ունենան համապատասխան որակավորման փաստաթղթեր:					

***Մասնակցի կողմից ծառայության մատուցման առավելագույն ժամկետը 12 ամիսն է: Գնային առաջարկը ներկայացված է մեկ թվային արտահայտությամբ 12 ամսվա ծառայության մատուցման համար: Վճարումն կկատարվի փաստացի մատուցված ծառայության համար՝ ամսական կտրվածքով, որի հաշվարկը կիրականացվի հիմք ընդունելով մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկը:**

*** Պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, այունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Առողջապահության նախարարություն,
Երևան, Կառավարության 3 շենք
ՀՎՀՀ 02507171

Կ.Տ.

(ստորագրություն)

Աշխատակազմի ղեկավարի Ժ/պ՝ Ն.Զուլոյան

ԿԱՏԱՐՈՂ

«Մայ Քլաբ» ՍՊԸ
Ք.Աշտարակ, Գիպտական 2 , բն 3 ՀՎՀՀ
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570004723220100
ՀՎՀՀ 02593047

Կ.Տ.

(ստորագրություն)

Տնօրեն Գ.Սարգսյան

Հավելված N 2
« 28» Դեկտեմբերի 2017թ. կնքված
ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2018/1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	72211124	Ցանցային, համացանցային և ներքին ծառայողական կայքի (ինտրանետի) համակարգչային ծրագրային փաթեթների սպասարկման ծառայություններ												

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Առողջապահության նախարարություն.
Երևան, Կառավարության 3 շենք
ՀՎՀՀ 02507771
_____ Կ.Տ.
(ստորագրություն)
Աշխատակազմի ղեկավարի ժ/պ՝ Ն.Հովոյան

ԿԱՏԱՐՈՂ

«Մայ Քլաբ» ՍՊԸ
Ք.Աշտարակ, Գիտության 2 , բն 3 ՀՎՀՀ
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570004723220100
ՀՎՀՀ 02593047
_____ Կ.Տ.
(ստորագրություն)
Տնօրեն Դ.Սարգսյան

Հավելված 3
« » 20 թ. կնքված
ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2018/1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ
«Մայ Քլաբ» ՍՊԸ
Ք.Աշտարակ, Գիտական 2 , բն 3 ՀՎՀՀ
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570004723220100
ՀՎՀՀ 02593047

Պատվիրատու
ՀՀ Առողջապահության նախարարություն.
Երևան, Կառավարության 3 շենք
ՀՎՀՀ 02507171

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ **ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՑԱՆՑԱՅԻՆ, ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ և ՆԵՐՔԻՆ ՑԱՆՑԻ և ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԿԱՅՔԻ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱԹԵԹՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.

Պայմանագրի համարը՝ ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2018/1

Պատվիրատուն՝ ի դեմս _____ և

Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ՀՀ առողջապահության նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) և «Մայ Քլաբ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ «ՄԱՅ ՔԼԱԲ» ՍՊԸ-Ի ՄԻՋԵՎ 28.12.17թ. ԿՆՔՎԱԾ «ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2018/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ՑԱՆՑԱՅԻՆ, ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ և ՆԵՐՔԻՆ ՑԱՆՑԻ և ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԿԱՅՔԻ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱԹԵԹՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «23» «Մարտի» 2018թ.

1. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի ղեկավար Ն.Զուլոյանի մի կողմից, և «Մայ Քլաբ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Դ.Սարգսյանի, մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով **28.12.17թ.** կնքված «Ցանցային, համացանցային և ներքին ցանցի և ծառայողական կայքի համակարգչային ծրագրային փաթեթների սպասարկման ծառայությունների» ձեռքբերման «ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2018/1» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.13 կետերը կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1.1 Պայմանագրի Հավելված 2-ում՝ «Վճարման ժամանակացույց»-ում կատարել փոփոխություն՝ համաձայն սույն Համաձայնագրի Հավելված 1-ի:

2. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը և գործում է մինչև Կողմերի միջև Պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման ավարտը:

3. Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքները և պարտականությունները թողնվում են անփոփոխ:

4. Համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ Առողջապահության նախարարություն.	«Մայ Քլաբ» ՍՊԸ
Երևան, Կառավարության 3 շենք	Ք.Աշտարակ, Գիտավան 2 , բն 3 ՀՎՀՀ
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ900011018885	Հ/Հ 1570004723220100
ՀՎՀՀ 02507171	ՀՎՀՀ 02593047
_____ Կ.Տ.	_____ Կ.Տ.
(ստորագրություն)	(ստորագրություն)
Աշխատակազմի ղեկավարի Ժ/պ Ն.Զուլոյան	Տնօրեն Դ.Սարգսյան

Հավելված 1
«23» «Մարտի» 2018թ. կնքված թիվ 1 համաձայնագիր
Հավելված 2
«28» Դեկտեմբեր 2017թ. կնքված
N ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2018/1 ծածկագրով պետական գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	72211124	Ցանցային, համացանցային և ներքին ծառայողական կայքի (ինտրանետի) համակարգչային ծրագրային փաթեթների սպասարկման ծառայություններ	-	-	1,459,600	5,108,915	5,108,915	5,108,915	8,758,140	8,758,140	8,758,140	14,596,900	14,596,900	14,596,900	**14,596,900**

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Առողջապահության նախարարություն.
Երևան, Կառավարության 3 շենք
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ900011018885
ՀՎՀՀ 02507171

_____ Կ.Տ.
(ստորագրություն)
Աշխատակազմի ղեկավարի տեղակալ Ն.Հովսեփյան

ԿԱՏԱՐՈՂ
«Մայ Քլաբ» ՍՊԸ
Ք.Աշտարակ, Գիտական 2 , բն 3 ՀՎՀՀ
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570004723220100
ՀՎՀՀ 02593047

_____ Կ.Տ.
(ստորագրություն)
Տնօրեն Դ.Սարգսյան